



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

«Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ info\_veghegnadzor@aarhus.am, narekbeg@yahoo.com»

Ե-03/14

7 Ապրիլ

«Վ Գնդեվազի համայնքապետ

Հայրապետ Մկրտչյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մկրտչյան,

«Հիմք ընդունելով «Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, «Վ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» «Վ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.


1. Երբ է կառուցվել Գնդեվազ համայնքի խմելու ջրի հավաքման ու բացթողիչ հանգույցը:
2. Որոնք են Գնդեվազ համայնքի խմելու ջրերի աղբյուրները, խմելու ջրի քանի ջրագծից է սնվում Գնդեվազ համայնքը, և որքան է յուրաքանչյուր ջրագծի երկարությունը:
3. Որքան խմելու ջուր է մտնում Գնդեվազ համայնք, արդյոք ներկա չափաքանակն ապահովում է համայնքի բնակիչների խմելու ջրի պահանջարկը:
4. Որ մարմինն է իրականացնում Գնդեվազ համայնքի ջրամատակարարման հսկողությունը:
5. Վերջին անգամ երբ է Գնդեվազ համայնքի խմելու ջուրը տարվել փորձաքննության, ինչպիսին է Գնդեվազ համայնքի խմելու ջրի ֆիզիկական ու քիմիական բաղադրությունը, խնդրում եմ տրամադրել նաև փորձաքննության արդյունքները:

«Տեղեկատվության ազատության մասին» «Վ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել անբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մեր ժաման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» «Վ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող  Նարեկ Բեգլարյան